

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

Պ Ա Տ Մ Ա - Բ Ն Ա Ս Ի Ր Ա Կ Մ Ա
Տ Ա Ն Դ Ե Ս
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

Ա Ռ Ա Ն Ձ Ն Ա Տ Ի Պ

ОТДЕЛЬНЫЙ ОТТИСК

2001, 1 (156)

ՍԱՆԱՀՆԻ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Սանահնի և Հաղբատի վանքերը, որ եղել են Տաշիր-Ձորագետի Հոգևոր կենտրոնը, հիմնադրվել են X դարի երկրորդ կեսի ընթացքում, Անիի Բագրատունյաց թագավորության օրոք:

Սանահնի վանքի գլխավոր՝ Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է Աշոտ III Ողորմածի (թագավորել է 953-977 թթ.) կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու հովանավորությամբ: Եկեղեցու կառուցումն ավարտվել է 966 թվականին¹: Եկեղեցու արևելյան ճակատի դեկորատիվ սյունակամարաշարը մշտապես հետաքրքրել է ճարտարապետության հետազոտողներին՝ կապված գոթական ճարտարապետության արևելյան նախօրինակի հարցի հետ²: Ճարտարապետական այդ մոտիվն իր յուրահատուկ կողմերով առկա է VII դարի Զվարթնոցի տաճարում, Անիի X դարի Աստվածամոր տաճարում, Քուլթախի XI դարի Բագրատի տաճարում, ապա Հայաստանի ու Վրաստանի բազմաթիվ հուշարձաններում:

Վրաց հետազոտող Գեորգի Գագոշիձեն վիճարկում է Ամենափրկիչի թե՛ կառուցողի ու վրինելը, թե՛ կառուցման ժամանակը³: Ըստ նրա, Խոսրովանույշ թագուհու կառուցածը մինչ այժմ գոյատևող Աստվածածին եկեղեցին է, իսկ Ամենափրկիչը XI դարի կեսերին կառուցել են Կյուրիկե I և Սմբատ թագավորները:

Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ժամանակի հարցին մինչ Գ. Գագոշիձեն անդրադարձել են նաև անցյալում: Դեռևս XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին այդ եկեղեցու կառուցումը վերագրում է Դավիթ Անհողինի որդի, XI դարի կեսերին թագավորող Կյուրիկեին: Այդ կարծիքը բաժանում էին նաև Մ. Բրոսեն, Հ. Մովսեսյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը: Կարո Ղաֆաղարյանը վերոհիշյալ գիտնականների կարծիքները անհիմն էր համարում, այդ հաստատելու համար բերելով ութ կետերում շարադրված, մեր կարծիքով, հիմնավոր փաստեր⁴: Գ. Գագոշիձեն,

1 Տե՛ս Կ ա Ր Ո Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն. Սանահնի վանքը և նրա արձանագրությունները. Երևան, 1957, էջ 18: Ակնարկ հայ ճարտարապետության պատմության. Երևան, 1964, էջ 225: О. Х. Х а л п а х ч ь я н. Санаин. М., 1973, с. 27.

2 Տե՛ս Տ ի Ր ա ն Մ ա Ր Ո ւ թ յ ա ն. Գոթակա՞ն, թե՞ հայ-գոթական ճարտարապետական ոճ. - «Գարուն», 1997, N 7, էջ 54-56:

3 Г е о р г и й Г а г о ш и д з е. К датировке церкви Спаса Санаинского монастыря. - Review. Vol. II. Tbilisi. 1996, pp. 115-129, tables XXX-XXXIII (The Georgian Ministry of Culture. Shalva Amiranashvili State Art Museum of Georgia) (վրացերեն): Խորին շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Պավել Ձորանյանին՝ հոգվածը թարգմանելու և մեզ մատչելի դարձնելու համար:

4 Տե՛ս Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 20-25:

չբավարարվելով Կ. Ղաֆաղարյանի բացատրություններով, մասամբ նոր փաստերի հիման վրա, փորձում է հիմնավորել նախորդների կարծիքը, և դրանով իսկ 966 թ. կառուցումն ավարտված Ամենափրկիչը «երիտասարդացնում է» մոտ մեկ հարյուրամյակով: Գ. Գազոշիձեն գրում է. «Մասնազետների մեծամասնությունը գտնում է, որ Սանահնի վանքի Աստվածածին եկեղեցին կառուցվել է 930—ական թվականներին, իսկ Ամենափրկիչը կառուցել է 967 թ. Անիի Աշոտ III Բագրատունու կին Խոսրովանույշը: Համապատասխանաբար տաճարի արևելյան ճակատի քանդակում պատկերված են Անիի թագաժառանգ Սմբատ II-ը (977-990 թթ.) և նրա եղբայր Գուրգենը՝ Տաշիր-Ձորագետի թագավորության հիմնադիրը, թեպետ քանդակի վերևում փորագրված է թագավոր Կյուրիկե և թագավոր Սմբատ: Այստեղ փորձ է արվում այդ հակասությունը բացատրել նրանով, որ իբր Կյուրիկեն Գուրգենի երկրորդ անունն է, որը, սակայն, անհիմն է: Հայկական վիմափոր աղբյուրներում որպես Տաշիր-Ձորագետի առաջին թագավոր անվանում են միայն Գուրգենին, ինչպես և զբղծված է գերեզմանաքարի վրա:

Սմբատի հազուստը քանդակում չի համապատասխանում Անիի Շահնշահ թագավորների հազուստին (խալաթ և չայմա), այդպես են պատկերված Սմբատ II-ը Հաղբատի քանդակում և Գագիկ I-ը Անիում: Այն, որ Սմբատ թագավորը Սանահնի քանդակում և Անիի թագավոր Սմբատ II-ը տարբեր դեմքեր են, վկայում են նաև նրանց մորուքների տարբեր ձևերը՝ բոլորաձև Հաղբատում և երկփեղկված՝ Սանահնի քանդակում: Այն, որ երկու թագավորներն էլ Սանահնի քանդակում պատկերված են բյուզանդական տիպի թագերով, մի լրացուցիչ փաստական վկայություն է հօգուտ այն հետազոտողների, որոնք Սանահնի կտիտորներին տեսնում են որպես Կյուրիկե և Սմբատ եղբայրների, որոնք XI դարի երկրորդ կեսում թագավորում էին Տաշիր-Ձորագետում: Հայտնի է, որ Կյուրիկեն կրում էր բյուզանդական կյուրապաղատի պատվավոր կոչում, ըստ երևույթին, բյուզանդական ինչ-որ պատվավոր կոչում է ունեցել նաև Սմբատ թագավորը:

X—XI դարերի գրավոր սկզբնաղբյուրները Սանահնի Փրկչի եկեղեցու կառուցման վերաբերյալ ուղղակի ցուցումներ չեն բովանդակում: Նրանք բոլորը վկայում են թագուհի Խոսրովանույշի կողմից վանքը հիմնելու մասին, իսկ 979 թ. Անիի Սմբատ II-ի հրովարտակում Սանահնի վանքին եպիսկոպոսական կարգ տալու վերաբերյալ հիշվում է միայն Աստվածածնի տաճարը և ոչ Փրկչի եկեղեցին, որն այդ ժամանակ, ինչպես երևում է, դեռ կառուցված չէր:

Փրկչի եկեղեցու երկու դռների և արևմտյան պատուհանի սկզբնական զարդարանքները՝ «եռանկյունի ատամնաշարով» և «կրկնակի ոլորվածքով գլանիկը կաթիլաձև փորվածքով» նույնպես վկայում են այն, որ Փրկչի եկեղեցին չէր կարող XI դարի սկզբից վաղ կառուցված լինել: Այդ մտտիվները հատուկ չեն հայ ճարտարապետության քանդակին: Մինչդեռ լայնորեն ներկայացված են վրացական եկեղեցիների ճակատների «եռանկյունի ատամնաշարերը»՝ էպիգոդիկ ձևով օգտագործված վրաց ճարտարապետության մեջ X դարի երկրորդ կեսին (Օշկ, Վալե), դրանք լայն գործադրություն են ստացել XI դարի առաջին կեսին (Մանգլիս, Կացխի, Իշ-

խանի, Տբեթի և այլն) և ավելի վաղ չեն հանդիպում: «Կրկնակի ոլորվածքով գլանիկը կաթիլաձև փորվածքով» քանդակը շարունակում է մնալ վրաց ճարտարապետության մեջ մինչև միջնադարի վերջը, XI դարի սկզբից սկսած (Նիկործմինդա, Մանգլիսի, Կացխի, Սամթավոր):

Անտարակույս, այս քանդակները փոխառել է Սանահնի ճարտարապետը վրաց ճարտարապետության քանդակներից, և այդ կարող էր տեղի ունենալ միայն XI դարում:

Ողջ վերահիշյալը մեզ հիմք է տալիս Սանահնի վանքի Փրկչի եկեղեցին համարել կառուցված XI դարի կեսին, Կյուրիկե I և Սմբատ թագավորների օրոք, որոնք և պատկերված են կտիտորների դերում արևելյան ճակատի քանդակում: Այս մեկն է ստեղծագործական շփումների այն վառ օրինակներից, որ գոյութուն է ունեցել երկու հարևան մշակույթների միջև. վրացականի և հայկականի»⁵:

*
* *

Հայտնի է, որ մեր եկեղեցիների մանրակերտերից ոչ բոլորն են, որ ճշտորեն անդրադարձնում են իրականը, դրանք պայմանական բնույթ ունեն և ոչ բոլոր դեպքերում կարող են հաստատուն փաստի դեր կատարել: Տվյալ դեպքում Սանահնի Ամենափրկչի կտիտորական քանդակը, առավել ևս եկեղեցու պատկերը այնքան հեռու են իրականից, որ ընդհանուր համարյա ոչինչ չկա:

Ինչ վերաբերում է կտիտորների հագուստին, ապա պետք է հիշեցնել, որ դրանցում պատկերված են թագաժառանգներ և ոչ թագավորներ՝ Գուրգենն ու Սմբատը, հետևաբար նրանց իրավունք չէր վերապահված հագնել արաբական ծիրանին և կրել չալմա ասված գլխարկը. այդպիսիք կրում էին միայն արաբական խալիֆաթի կողմից որպես թագավորներ ճանաչվածները: Այսպիսի իրավիճակում թագաժառանգները հագնվել են իրենց ուզածի պես: Բայց ահա 967 թ. Սմբատը կարգվում է Անիի թագավոր՝ Սմբատ Տիեզերակալ, իսկ Գուրգենը՝ 968 թ. Տաշիր-Ձորագետի թագավոր. նոր իրավիճակին համապատասխան նրանց քանդակել են արաբական հագուստով (տե՛ս Հաղբատի Ս. Նշան եկեղեցու արևելյան ճակատի քանդակը): Եթե անդրադառնանք մորուքներին, որոնք մի դեպքում ճյուղավորված են պատկերված, մյուս դեպքում՝ ամփոփ, ապա այդ էլ ոչ միայն երկու տարբեր քանդակագործների ճաշակների հարց է, այլև հետևանք քանդակներն իրականացնելու տարբեր ժամանակների (մոտ տաս տարվա), երբ փոփոխվում է նույնիսկ մարդու դիմահարդարանքը:

Գագոշիձեն հարց է բարձրացնում, որ եթե Սանահնի կտիտորները պատկերվել են այն ժամանակ, երբ դեռ թագաժառանգներ էին լոկ, ապա ինչու՞ քանդակների շրջանակի վերին եզրում վիմագրված է Կյուրիկե թագավոր, Սմբատ թագավոր: Ինքը գտնում է, որ հնարավոր չէ, որ քանդակագիրը հետո իրականացված լինի, երբ թագաժառանգները արդեն

դարձել էին թագավորներ: Նա այդ համարում է անհավանական, քանի որ լոկ գիրն իրականացնելու համար մոտ 15 մետր բարձրությամբ խարաչո (տախտակամած) չէին պատրաստի: Նա չի ենթադրում, որ խարաչոների փոխարեն հաճախ պատրաստվում էին կախովի հարթակներ: Այդ սովորույթը եկեղեցիների, և ոչ միայն եկեղեցիների նորոգումների ժամանակ շատ գործածական էր. այստեղ, թերևս, հենց այդպես էլ արվել է:

Որ վիմագրողը գործել է դժվար պայմաններում, հավաստվում է գրերի տեսքով. շտապողականության կնիքն անուրանալի է: Նա սկզբից պիտի գրելիք տարածությունը բաժաներ մասերի՝ ելնելով տառերի քանակից, մինչդեռ սկսել է վիմագրել ձախ ծայրից, իսկ վերջում տեղ չի եղել, և մնացած հինգ տառերը փորագրել է շրջանակի աջ կողի վրա⁶:

Տեղին է հիշեցնել, որ կտիտորների հագուստի վերաբերյալ աշխատության հեղինակի բնութագրություններն այնքան էլ ճշգրիտ չեն և ոչ բոլորն են հավաստի, քանի որ տվյալ դեպքում Հաղբատի Սմբատի հագուստը արաբական համարելը կամ Սանահնի կտիտորների հագուստը բյուզանդական համարելը նույնպես պայմանական է: Օրինակ, Սանահնի կտիտորների հագուստը շատ ավելի մոտ է Անիի Գագիկ I-ի արաբական համարված հագուստին, քան Հաղբատի Սմբատի հագուստին, մինչ հոգվածագիրը լրիվ հակառակն է պնդում:

Հնարավոր է ենթադրել, որ եթե Սանահնի և Հաղբատի կտիտորական քանդակները XI դարում պատրաստեին, վարպետները կձգտեին Հնարավոր չափով իրենց գործի մակարդակը (հատկապես շինության մանրակերտը ստեղծելիս) մոտեցնել X դարի վերջում կերտված Գագիկաչենի հանրահայտ քանդակի մակարդակին՝ արվեստի առումով. ինչպես տեսնում ենք, այդ տեղի չի ունեցել: Դիտարկվող քանդակները իրենց ժամանակի՝ X դարի երկրորդ կեսի գործեր պիտի համարվեն:

Կ. Ղաֆադարյանը գրում է, որ «Սանահնի հիմնարկության ճիշտ ժամանակը որոշելու համար վճռական նշանակություն ունեն ժամանակակից երկու փաստաթղթեր, որոնք պահպանվել են Սանահնի «Քոթուկի» մեջ արտագրված լինելու շնորհիվ: Դրանցից մեկը 979 թ. գրված՝ Սմբատ Տիեզերակալի արքայական հրովարտակն է, որով նա Սանահնում հաստատում է եպիսկոպոսական աթոռ և շնորհում է նրան ընդարձակ վիճակ...: Երկրորդը Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնավորաց» ձեռագիր գրքի հիշատակարանն է, գրված հայոց ՆԻԱ (421+551=972) թ. Սանահնի նորաչեն վանքում:

Առաջին փաստաթղթի մեջ Բագրատունի Սմբատ Տիեզերակալ թագավորը գրում է. «եկի ի տեսութիւն սուրբ ուխտիս Սանահնիս, զոր շինեալ էր թագաւորն Աշոտ. եւ խորովանոյշ թագուհին՝ հայրն և մայրն իմ»⁷: Փաստաթղթում այնուհետև շարունակվում է. «եւ տեսի զի աստվածաշէն և թագաւորաշէն էր, վասն որոյ և սիրեցի և սիրոյ նշան արարեալ

6 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., արձանագրություն N 3: Օ. X. X a л - П а х ч ь я н. նշվ. աշխ., նկ. 29:

7 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 14-15: Մատենադարան, ձեռագիր № 3031, «Քոթուկ» (այսուհետև «Քոթուկ»), էջ 47:

Հաստատեցի զսա եպիսկոպոսութեան և սահմանեցի զվիճակ սբ Աստվածածնիս [ընդգծումն մերն է – Տ. Մ.]...»⁸:

Այս նույն փաստաթուղթը վկայում է նաև Գ. Գագոշիձեն ստորև բերված ձևով. «Այսպիսով, այս հրովարտական հատակ սաված է, որ եպիսկոպոսական աթոռը հիմնադրվել էր Սանահնի Աստվածածին եկեղեցում: Այս հարցի հետ կապված նշելի է, որ Սուրբ Աստվածածին կոչելով, հնարավոր է Սանահնի ամբողջ համալիրը հասկացվի, թեև ավելի հավանական է, որ այստեղ կոնկրետ այս եկեղեցին նկատի առնվի: Պարզ է, որ ոչ էլ այս վկայություն հիման վրա հնարավոր է Ամենափրկիչ տաճարի թվագրումը X դարով»⁹:

Ինչպես պարզորոշ երևում է, Գ. Գագոշիձեն թագավոր Սմբատ II Տիեզերակալի հրովարտակը Սանահնի ուխտի վերաբերյալ ներկայացնում է ոչ ճշգրիտ. փաստաթղթում «եկեղեցի» բառը չկա, ընդհակառակը, այստեղ նույնիսկ «Աստվածածինը» հասկացվում է ավելի լայն ընդգրկումով, ինչը նկատում է նաև ինքը՝ Գ. Գագոշիձեն, գրելով, թե՛ «...նշելի է, որ Սուրբ Աստվածածին կոչելով, հնարավոր է, Սանահնի ամբողջ համալիրը հասկացվի...»: Այս միանգամայն ճիշտ զգացումը ունենալով, և այնուամենայնիվ, ելնելով իր սկեռուեն մտքից, հրաժարվում է դրանից, շարունակելով թե՛ «... թեև ավելի հավանական է, որ այստեղ կոնկրետ այս եկեղեցին նկատի առնվի»:

Ինչ խոսք, այսպես վարվելով նա ապակողմնորոշում է ընթերցողին, Հասցնում սխալ, իրականին հակառակ եզրակացություն: Հեղինակն իր վերոհիշյալ մոտեցումով հնարավորություն է ձեռք բերում գրելու՝ «Ամենուրեք հիշվում է Աստվածածինը, իսկ Փրկիչը՝ ոչ»: Հոգվածագիրը հանիրավի անտեսում է Կ. Ղաֆաղարյանի ծանուցումը, թե Ամենափրկիչը անվանվում էր «Կաթողիկե»: Ահա այս «Կաթողիկե» ասվածը կա: Օրինակ, Գուրգեն թագավորը, համաձայն «Պատմութիւն ջահից կաթողիկէի» փաստաթղթի, երկու ջահ է ձեռք բերում՝ 120 և 40 կանթեղներով. մեծը նվիրում է Կաթողիկեին, փոքրը՝ Ս. Աստվածածնի և Ս. Կաթողիկեի գավթին¹⁰: Այս հաղորդումը միաժամանակ ցույց է տալիս, որ թագավոր Գուրգենի օրոք (968-989թթ.) Աստվածածին եկեղեցու և Կաթողիկեի (Ամենափրկիչի) արևմտակողմում եղել է միացյալ գավթի, որը Հետագայում քանդվել է ու նրա տեղում կառուցվել են նոր գավթի թև և նախագավթի թև:

Գ. Գագոշիձեն Գուրգեն թագավորի հրովարտակին վերաբերող մասը համարում է անհավանական այն հիման վրա, որ իբր Կաթողիկեի և Աստվածածնի առջևում միացյալ գավթի չի եղել: Այստեղ նա վկայակոչում է Թ. Թորամանյանին, որ իբր ծածկված գավթի մենք սկսել են կառուցել համեմատաբար ուշ ժամանակներում: Բայց չէ որ այս գավթի թև կարող էր բաց սյունասարահի ձևով լինել:

Աշխատության հեղինակի ակնարկները, թե իբր Սանահնի վանքին վերաբերող ձեռագիր տեքստում՝ «Բոթուկում» առկա են հավելումներ կամ ուղղումներ և այլ լրացումներ՝ անհիմն են, քանի որ Սանահնի «Բո-

8 «Բոթուկ», էջ 47:

9 Գ. Գ ա ց օ Պ և Դ Յ Ե. նշվ. աշխ., էջ 117:

10 «Բոթուկ», էջ 51:

թուկի» մեզ հետաքրքրող մասում ոչ մի նման գրառում չկա, տեքստը պահպանված է լավ վիճակում, ուղղումներ, հավելումներ, կցումներ չկան:

Կասկածելու առիթ չի հարուցում նաև կրոնավոր Միմեալների հիշատակարանը. նա պատահական դեմք չէ ինչպես Ամենափրկչի, այնպես էլ Հաղբատի Սուրբ Նշան եկեղեցու կառուցման գործում, ուր տեղափոխվել է Ամենափրկչի կառուցումից հետո:

Գ. Գագոշիձեն իր տեսութունը առավել հավաստի ներկայացնելու նպատակով պատմական փաստաթղթերից բացի դիտարկման է ներկայացնում Ամենափրկիչում գործադրված որոշակի զարդաքանդակներ, որպիսիք առկա են XI դարում և հաջորդ ժամանակներում Վրաստանում կառուցված հուշարձաններում (այդ թվում նաև Իշխանում), որոնցից և իբր օրինակել է Ամենափրկչի կառուցողը: Հետևում է, որ, ըստ նրա, Ամենափրկիչը ևս կառուցվել է XI դարի կեսերում:

Դեռևս 1972 թ., և ապա 1978 թ. հրատարակած մեր ուսումնասիրությունների մեջ Իշխան տաճարի մասին գրված է. «Խորամուխ լինելով մանրամասներում, պարզվում է, որ Իշխանում գործադրված ուշ ժամանակի համարվող քանդակամոտիվները հանդիպում են վաղ միջնադարի մեր մի շարք հուշարձաններում»¹¹: Օրինակ, «սղոցի ատամներին» տեսք ունեցող քանդակը, որ կա Իշխանի գմբեթի քիվում, չքամուտքի, ավագ խորանի պատուհանի կամարաղեղներում և այլ տեղերում, գործադրված է նաև VII դարի մի շարք եկեղեցիներում, պատուհանների կամարաղեղներում: Այստեղ «սղոցի ատամներ» անվանված քանդակը Գ. Գագոշիձեի «ТРЕУГОЛЬНЫЕ ЗУБЧИКИ» (եռանկյունի ատամնաշար) անվանված նույն քանդակն է¹²: Այս քանդակի վաղ (IV–V դդ.) օրինակներից են և քառակող մի շարք կոթողների ստորին մասերը ձևավորողները, որոնք բերված են ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի և ուրիշների գործերում¹³: Դիտարկվող քանդակը գմբեթի քիվում և չքամուտքի կամարաղեղում լայնորեն գործադրված է նաև X դարի Եղեգնամորում (Չանգլի՝ Արևմտյան Հայաստանի Կաղզվան բնակավայրից ոչ հեռու)¹⁴: Այս հուշարձանի մասին Գ. Չուբինաչվիլին կարծիք է հայտնել, որ տաճարի ընդհանուր պատկերը, նրա համաչափությունները, քանդակի գործադրման բնույթը, առանձին տարրերը նրան պատկանել են տալիս հայ ճարտարապետությունը: Վրացականը իր

11 Տ ի ր ա ն Մ ա ր ու թ յ ա ն. Տալքի ճարտարապետական հուշարձանները. Երևան, 1972, էջ 34: Ն ու յ ն ի՝ Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք. Երևան, 1978, էջ 29, 33: Ն ու յ ն ի՝ Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Анийской Богоматери..., Ереван, 1989, с. 166.

12 Պետք է խոստովանել, որ հայ ճարտարապետության ընդհանուր պատմության գրքերից և ոչ մեկում (հեղինակներ՝ Ն. Մ. Տոկարսկի, Վ. Մ. Հարությունյան, Մ. Մ. Հասրաթյան և ուրիշներ) հանիրավի «եռանկյունի ատամնաշար» քանդակատեսակը համապատասխան ձևով չի ներկայացված:

13 Բ. Ն. Առաքելյան. Հայկական պատկերաքանդակները IV–VII դարերում. Երևան, 1949: Այստեղ տե՛ս մասնավորապես նկ. 18 (կոթող պատկերաքանդակով, Ագարակ), նկ. 19 (կոթող պատկերաքանդակներով Ադրյամանից), նկ. 27 (կոթող խոզագլուխ Տրդատի պատկերով Վանք-Նարաբայում), նկ. 28 (կոթողի բեկոր պատկերաքանդակներով, Թային), նկ. 29 (կոթող պատկերաքանդակներով, Մրեն): Տե՛ս նաև Ա. Ն. Շ ա հ ի ն յ ա ն. Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX–XIII դարերի խաչքարերը. Երևան, 1984, էջ 9:

14 В. Б е р и д з е. Архитектура Тао-Кларджети, Тбилиси, 1981, с. 186.

ներկայությունը զգացնել է տալիս միայն քանդակներում (գմբեթաթմբուկի քիվում և արևմտյան շքամուտքում)¹⁵: Ի միջի այլոց, նկատենք, որ Իշխանում այս քանդակը գործադրված է գրեթե նույն տեղերում և նույն սկզբունքով, բայց նրա վերաբերյալ չի ասվում այն, ինչ ասվում է Եղեգնամորի վերաբերյալ:

Անհերքելի է, որ «եռանկյունի ատամնաշար» քանդակը Ամենափրկիչում ավելի վաղ է գործադրվել, քան Եղեգնամորում (X դար) և Իշխանում (1032 թ.): Այստեղ այդ քանդակը խորություն չունի՝ մակերեսային է, թվում է, թե առաջին փորձն է, գործադրված անհամարձակ՝ քանդակապատված է արևմտյան շքամուտքի ուղղանկյուն բացվածքի շրջանակը միայն, և որովհետև շքամուտքը այդքանով անհրաժեշտ չքեղություն չի ստացել, հետագայում հեռանկարային դասավորության կողային երեքական սյուններով ու եռածալ քանդակապատ կամարաղեղով հարստացրել են այն: Մինչ Եղեգնամորում և Իշխանում այդ քանդակով չքեղորեն պատել են շքամուտքերը վարից վեր, ընդգրկելով ողջ կամարաղեղը (այդ քանդակով են շրջանակված արևելյան ճակատի լուսամուտները և նույնիսկ ինտերյերի որոշ դրվագներ), ապա և գմբեթաթմբուկների քիվերը: Այս վերջիններս այնպես խոր են քանդակել և իրենց հիմքից այնքան են առաջացել, որ զգալի ստվերներ են նետել պատի վրա, ստեղծելով լույս ու ստվերի հարուստ խաղ:

Ձենք կասկածում, որ Ամենափրկիչի ճարտարապետը, եթե այս վերջիններս տեսած լիներ, անպայման կվարվեր նրանց ճարտարապետների պես և իր տաճարը կհարստացներ նաև այդ քանդակատեսակով: Այս հաստատումն է նրա, որ Ամենափրկիչը ավելի վաղ է կառուցվել (X դարի երկրորդ կեսին), քան վերոհիշյալ երկու հուշարձանները:

Այժմ, երբ պարզվում է, որ այդ քանդակներն իրենց օրինակներն ունեն մեր վաղ միջնադարի հուշարձաններում, սկսած IV–V դարերից, այլևս ավելորդ է հիշել նրանց ստեղծվելը կամ գործադրվելը XI դարում վրաց ճարտարապետության շրջանակներում:

Այսպիսով, պարզվում է, որ Գ. Գագոշիձեն խստագույնս վրիպում է «եռանկյունի ատամնաշարի» քանդակի հարցում. այն ոչ թե առաջինը ստեղծվել է XI դարի վրաց ճարտարապետության շրջանակներում և ընդօրինակվել է Ամենափրկիչում, այլ ստեղծվել է հայ ճարտարապետության շրջանակներում կես հազարամյակ վաղ և գործադրվել է Ամենափրկիչում X դարի կեսերին, XI և հաջորդ դարերում՝ Վրաստանի հուշարձաններում (տես Կացխին, Սավանան և այլն. սրանցում այդ քանդակը հանդես է գալիս խոյակներում, խարխիսներում, բայց շրջված ձևով և տարբերակներով):

Գրեթե նույնպիսի իրավիճակ է նաև Գ. Գագոշիձեի ներկայացրած մյուս քանդակի հարցում: Հետադոտողը չի նկատել, որ Սանահնի Ամենափրկիչում կրկնակի ոլորվածքով գլանիկ չկա, և որ քանդակը ստեղծում են փոքրիկ ուղղանկյուն, դեպի ներս գոգավոր ուղղագիծ, քարակերտ

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 187: Այս կարևոր հուշարձանը նույնպես չի ներկայացվում հայ ճարտարապետության պատմության ընդհանրական գործերում, թերևս դրանց հեղինակների քմահաճ վերաբերմունքի շնորհիվ:

տախտակներ, որոնց ծայրերի հանդիպումները առաջացնում են երկաղեղ ձգված փոսիկներ, համենայն դեպս ոչ կաթիլներ, ինչպես նկարագրում է աշխատության հեղինակը. «գծագրում պարզապես հեռավոր նմանության պատրանքը կա Վրաստանի հուշարձաններում եղածի հետ»¹⁶: Չմոռանանք նշել, որ եթե այդպիսիք նույնական լինեին, իրերի վիճակում ոչինչ չէր փոխվի, քանի որ ոլորվածքով գլանիկը հայ ճարտարապետությանը անհայտ չէր. այդպիսին առկա է VI-VII դարի հայկական հանրահայտ հուշարձան Մաստարայում, չխոսելով արդեն ավելի ուշ շրջանի հուշարձաններում դրանց գոյություն մասին:

Կան հետազոտողներ, որոնք անդրադառնալով հայ ճարտարապետական հուշարձանների դիտարկմանը, իրենց գործը դյուրացնելու համար հայկական որոշ կարևոր հուշարձաններ համարելով ոչ հայկական, դրանք առանց այլևայլության հակադրում են հայկական մյուս հուշարձաններին, հանգում թյուր եզրակացությունների: Մոտ անցյալում այդպես էր վարվում Գ. Ն. Չուբինաշվիլին. նա V դարի (ըստ Թաղաշվիլու) հայկական քառախորան Սիխեչ (Սուրբ Խաչ) հուշարձանը Սուխբեչի անունով, ներկայացնում էր որպես վրացական հուշարձան, հակադրվում հայ հետազոտողներին, ասելով, որ հայ ճարտարապետությունը VII դարում չունեի քառախորան (тетракоих) որևէ հուշարձան¹⁷: Այժմ էլ ահա Գ. Գազոշի՝ ձեն այնպիսի հուշարձաններ, ինչպիսին է Իշխանը, էլի այլ կոթողներ, հանրավի հակադրում է Ամենափրկչին:

Իշխանի ոչ միայն սկզբնապես կառուցվածը Ներսես III Շինողի կողմից, այլև 1032 թ. վերականգնված-երեսապատվածը վեճի առարկա դարձնելը տեղին չէ: Վերևում բերված մեր աշխատություններում մանրամասն խոսվում է այն մասին, որ Իշխանի վերանորոգող-երեսապատողի անունը Մորչախսձե չէ, չին վրացերենին լավատեղյակ ակադեմիկոս Սուրեն Երեմյանը տվյալ վիմագիր արձանագրության կառուցողի անվան առաջարկված վերջավորությունը չի հաստատում: Այնպես որ, վատ չէր լինի մեր հուշարձանները միմյանց դեմ չհանել և չհակադրել, ինչը որ փաստորեն անում է տվյալ դեպքում Գ. Գազոշիձեն: Մոտավորապես նույնպիսի իրավիճակ գոյություն ունի Եղեգնամորի (Չանգլի) հարցում¹⁸: Հիշենք, որ հայ Սենեքերիմ թագավորի և Խուշուշ թագուհու դուստր Մարիամը, որ Բագրատ III Աբխազաց թագավորի կինն էր և հորջորջվում էր Աբխազաց և Հայոց թագուհի, Գեորգի I-ի մայրը, Բագրատ IV-ի տատը, որ ժամանակին մասնակից էր հոր մեծ շինարարական գործունեությունը, նույն ձևով էլ մասնակցում և հովանավորում էր Վրաստանում կառուցումներին ու ար-

16 В. Б е р д з е. Грузинская архитектура с древнейших времен до начала XX века. Тбилиси, 1967, рис. 80, 95, 98; III. Р. А з а т я н. Порталы в монументальной архитектуре Армении IV-XIV вв., рис. 7; О. Х. Х а л п а х - ч б я н. Ե շ վ. ա շ խ., նկ. 1-47, 4 ար ո Ղ ա Ֆ ա դ ար յ ա ն. Ե շ վ. ա շ խ., էջ 7-31:

17 Г. Н. Ч у б и н а ш в и л и. Архитектура Кахетии. Тбилиси, 1959, с. 224-225.

18 Տե՛ս Տ ի ր ա ն Մ ար ու թ յ ա ն. Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք, էջ 116-119: Ն ու յ ն ի՝ Архитектурные памятники..., с. 217-219.

վեստին: Նա անմասն չի եղել Իշխանի վերակենդանացմանը, որպես նվեր շրջապատի Հայ բնակչությանը բուն Տայքում:

Գիտական նշանակություն ունեցող աշխատություն մեջ փաստը առաջնային նշանակություն ունի, միայն և միայն ունի փաստը կարող է բերել հարցի ճշգրիտ լուծման: Սակայն փաստը փաստ, բայց չի կարելի մոռանալ փաստի մեկնաբանման կողմը. այստեղ սուբյեկտիվ տարրը լուրջ դեր կարող է խաղալ: Փաստի մեկնաբանումը՝ տրամաբանությունն է: Տրամաբանությունը նույնքան արժեքավոր է, որքան ինքը՝ փաստը:

Մեր կարծիքով, Գ. Գազոչիձեի աշխատություն մեջ խիստ կաղում է տրամաբանությունը:

Հայտնի է, որ Սանահնում, մինչև վանքի եպիսկոպոսական կարգի արժանանալը, գոյություն ունեի Աստվածածին եկեղեցին: Ճարտարապետության պատմությունը հանգել է նրան, որ այն կառուցվել է 930-ական թվականներին, թագավոր Աբասի օրոք, որ այն կառուցել են Բյուզանդիայից հայրենիք պատսպարվելու եկած հակաքղեղոնական հոգևորականները: Բայց այնպես է պատահել, որ հանրահայտ պատմիչ Ստեփանոս Տարոնեցին՝ Ասողիկը իր աշխատության մեջ չի հիշում Սանահնի Աստվածածին եկեղեցին, մինչդեռ հիշում է մի շարք հայտնի եկեղեցիներ, որոնք կառուցել են 930-ական թվականներին Բյուզանդիայից վերադարձած վերահիշյալ հոգևորականները: Ոմանք այդ բացատրում են Ասողիկի տեղյակ չլինելու հանգամանքով, ոմանք էլ բացատրում են Աստվածածին եկեղեցու համեմատաբար աննշան երևույթ լինելու հանգամանքով: Այս իրավիճակը նկատի ունենալով, Գ. Գազոչիձեի գրում է, որ Աստվածածինը կառուցել և կամ նորոգել են ոչ թե հիշյալ հոգևորականները, այլ Աշոտ III Ողորմած թագավորը և իր կինը՝ թագուհի Խոսրովանույշը: Ըստ նրա, թագավոր Աշոտին և թագուհի Խոսրովանույշին Ամենափրկչի կառուցումը վերագրելը սխալ է:

Սանահնի Աստվածածին եկեղեցին, որի կառուցումը, ինչպես տեսանք, մի դեպքում վերագրում են փախստական հոգևորականներին, Գ. Գազոչիձեի Աշոտ թագավորին և Խոսրովանույշ թագուհուն, շատ հնարավոր է կառուցած լինեն հենց Սանահնի գյուղի բնակիչները, որպես իրենց գյուղի եկեղեցի: Համենայն դեպս, այն իր բարեմասնություններով համապատասխանում է կարծիքների հենց այս տարբերակին: Բուն եկեղեցին բավական փոքր է, ներքին տարածությունը՝ ավելի ճշգրիտ՝ աղոթասրահը ունի 10 մետր երկարություն և 4,3 մետր լայնություն, փոքր խորություն երկու խաչաթևերով, իր տարրողությունը ավելի փոքր է, քան գյուղական հացատուն-գլխատունը: Աստվածածինը հատակագծային չափերով Ամենափրկչից փոքր է 4 անգամ, ծավալով փոքր է 8 անգամ: Գմբեթի ներքին տրամագիծը 4,3 մետր է, այն կառուցված է որձաքարով և կրաշաղախով, քարը կիսամաքուր տաշվածքով, ոչ սրբատաշ, շարքերի կարերն էլ տաշվածքին համապատասխան, գմբեթաթմբուկը բարձրության կեսից վերև հետագայում է պատրաստվել: Եկեղեցին X դարի համար բավական համեստ է: Դե եթե այդ շինությունը իր չափերով ու ճարտարապետական նշանակությամբ այդքան համեստ է, ապա էլ ինչպես կարելի է նրա կառուցումը վերագրել թագուհի Խոսրովանույշին: Հիշենք, որ այդ ժամա-

նակներում էր կառուցվում Արգինեի հայտնի եկեղեցին, որը այս Աստվածածնի հետ համեմատել չի լինի:

Ոչ ոք առանց հատուկ նպատակադրման միջոցներ չի ներդնում որևէ կառույց իրականացնելու համար: Պարզ է, որ Սանահնում եպիսկոպոսական կարգ ստեղծելու նպատակով է, որ թագուհին ձեռնարկել է համապատասխան չափերի և տպավորիչ արտաքինով եկեղեցի կառուցել: Չի կարելի մտածել, թե հանկարծ գլխի են ընկել, որ լավ եկեղեցի է կառուցված, ուրեմն կարելի է եպիսկոպոսական աթոռ հիմնել: Այս ձեռնարկումը, պարզ է, ունեցել է պետական, քաղաքական և հոգևոր նշանակություն:

Անհավանական է Աստվածածնի բաղայի հիման վրա Անիի X դարի Բագրատունիների թագավորների կողմից այդպիսի եկեղեցին դարձնել եպիսկոպոսական նստոց: Տաշիր-Չորագետը Հայաստանի հյուսիսակողմի սահմանային շրջաններից է և ունի պաշտպանական նշանակություն. պահանջվել է այն ուժեղացնել, մտադրվել և մեկ տարի անց հիմնադրել են Կյուրիկյան թագավորություն և համապատասխան հոգևոր կենտրոն: Այդ թագավորության հիմնադիրը եղավ Սմբատ Տիեզերակալի կրտսեր եղբայր Գուրգենը: Թագավորությունը անվանվեց Կյուրիկյան, հիմնադիր Գուրգենն էլ՝ Կյուրիկե:

Հայտնի է, որ եկեղեցական աթոռ է այցելել Անիի թագավոր Սմբատ Տիեզերակալը, գոհ է մնացել իր այցելությունից, շինությունը, որտեղ ինքը գտնվել է, համարել է աստվածաշեն, թագավորաշեն, և սիրել է այն, հպարտությամբ նշել, որ կառուցել են իր հայրը՝ թագավոր Աշոտ III Ողորմածը ու իր մայր Խոսրովանույշ թագուհին: Այս ամենը հնարավոր է վերագրել ամեն ինչով համեստ Աստվածածին եկեղեցուն:

Պետք է նկատել նաև, որ պատմությամբ մեզ չի հասել որևէ հաղորդում Սանահնի և Հաղբատի վանքերի համեմատության, մեկը մեկին հակադրելու, կամ մեկը մյուսի նկատմամբ առավելություն ունենալու առումով, մինչդեռ նման երևույթ անկասկած կարող էր լինել, եթե Սանահնում Ամենափրկիչը կառուցված չլիներ, իսկ Հաղբատում նույնարժեք Ս. Նշանը կառուցված լիներ. պարզ է, պետք է ձգտում կամ բնական պահանջ լիներ եպիսկոպոսանիստ դարձնել Հաղբատը, և ո՛չ Սանահնը:

Ատողիկը, որ ապրել ու գործել է X դարում ու իր մահկանացուն կնքել 1004 թվականին, գրել է, որ Սանահնի և Հաղբատի վանքերի հոգևորականների թիվը հասնում էր 500-ի¹⁹: Եթե մոտավորապես 250-ը պիտի գործեին Սանահնում, ինչպե՞ս կարող էին որևէ գործունեություն ծավալել:

Մեր կարծիքով Գ. Գագոշիձեի բերած փաստերն ու փաստաթղթերը, քանդակատեսակների վկայաբերություններն ու իր մեկնաբանությունները բավարար հիմքեր չունեն, որոնք նկատի առնելով հնարավոր լինելու Ամենափրկիչը տեղափոխել ժամանակի մեջ: Դեռ ավելին, առկա են որոշակի երևույթներ, որոնց պարզ գնահատումը բավարար կարող էր լինել չզիմելու այլ, ոչ հավաստի երևույթների փաստարկման: Օրինակ, Ամենափրկիչի դեկորատիվ սյունակամարաշարը ամբողջությամբ վերցրած և առանձին

¹⁹ Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցույ Ատողկան Պատմութիւն Տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 181:

մասերը՝ խոյակներ, խարիսխներ, կամարներ, քանդակներ XI դարում կառուցված հուշարձանների նույն հարամասերի համեմատությամբ ակներև արխայիկ են, և չունեն շատ թե քիչ անմիջական նախորինակներ:

Այսպիսով, դիտարկվող աշխատության հեղինակ Գեորգի Գազոշի՝ ձեն Սանահնի Ամենափրկչի կառուցման ժամանակի հարցում խստագույնս վրիպում է, իր մտորումներում գալիս է իրականությանը տրամագծորեն հակառակ եզրակացությունների: Պարզվում է, որ Ամենափրկչի կառուցման ժամանակի և կառուցողների ով լինելու հարցում ավելի ճշգրիտ ու ճշմարիտ են այդ հուշարձանները առավել հանգամանորեն դիտարկողներ Կ. Ղաֆազարյանը և Հ. Խալիփախյանը: Ինչ վերաբերում է քանդակատեսակների ընդօրինակմանը, ապա պետք է կրկին ու կրկին հիշեցնել, որ այդպիսիք ստեղծվել են հայ ճարտարապետության շրջանակներում ուղիղ մեկուկես հազարամյակ մեզանից առաջ և գործադրություն են գտել մոտիկ ու հեռու ճարտարապետական շրջանակներում, այդ թվում հարևան Վրաստանում, նրա միջնադարում կառուցված շքեղ հուշարձաններում:

К ВОПРОСУ ДАТИРОВКИ СТРОИТЕЛЬСТВА ЦЕРКВИ СПАСИТЕЛЯ В САНАИНЕ

ТИРАН МАРУТЯН

Резюме

В истории армянской архитектуры известно, что строительство церкви Спасителя — главной в Санаинском монастыре — завершилось в 966 г. и что ее построила царица Хосровануш при содействии своего мужа царя Ашота Милостивого (953-977) из рода анийских Багратидов. Было и мнение, что церковь Спасителя построена сыновьями Давида "Анхохина" — царями Кюрике I и его братом Смбатом. Каро Кафадарян считал его ошибочным и показал основы этих ошибок. Г. Гагошидзе пытается, частично основываясь на новых фактах, доказать, что церковь Спасителя построил царь Кюрике I, правивший в середине XI в., а построенная или отреставрированная в X в. царицей Хосровануш церковь — это церковь Богородицы. Таким образом Г. Гагошидзе "омолаживает" церковь Спасителя приблизительно на один век. Г. Гагошидзе, говоря о том, что в исторических документах постоянно упоминается церковь Богородицы и не упоминается церковь Спасителя, забывает, что церковь Спасителя именовалась Катогике, а это название есть в грамоте первого царя Ташир-Дзо-рагета Гургена (умер в 989 г.), в связи с передачей в дар Катогике большой люстры. Г. Гагошидзе хорошо понимает, что название "св. Богородица" может относиться ко всему монастырю, но как бы забывая об этом, вероятно, с целью придать своему тезису убедительность, ставит перед словом "Богородица" слово "церковь", которое им самим было добавлено во взятом им отрывке из грамоты царя Смбата II. Одним из новых фактов, на которые опирается Г. Гагошидзе, является орнамент вокруг проема портала церкви Спасителя, который он называет "треугольным рядом зубцов". По Г. Гагошидзе, такой вид резьбы

изначально использовался в грузинской архитектуре в XI в., откуда и был заимствован строителем церкви Спасителя. Нам же известно, что такая резьба была распространена в армянской мемориальной архитектуре около 1500 лет назад и оттуда перешла на портал церкви Спасителя, отсюда – на армянские памятники – церковь Ехегнамор (возле Кагизмана) и затем на облицованную в 1032 г. церковь Ишхан и уже потом на грузинские памятники XI–XIII вв. Г. Гагошидзе, вероятно, интересуется не сама церковь Спасителя, а декоративная аркада фасада, которая признана учеными ранним прототипом готической архитектуры. Дело в том, что прототипы этих декоративных мотивов имеются в памятниках армянской архитектуры VII в., так что церковь Спасителя повторяет то, что уже было в VII в., поднимая это на новую ступень развития. Таким образом, Г. Гагошидзе ошибается в датировке церкви Спасителя в Санаине.